ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N094102-16Բ

ք. Երևան <<31>> 01. 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու մի կողմից, և <<Գորիսի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ը, ի դեմս համալսարանի ռեկտորի պ/կ՝ Թ. Մարությանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող մյուս կողմից, ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի 09.4.1.02.բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում <<Գորիսի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի անվճար համակարգում ընդգրկված միջին տարեկան 65 ուսանողի, ինչպես նաև ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողների ուսուցում, որի դիմաց Պատվիրատուն պարտավորվում է ուսանողական նպաստների ձևով իրականացնել ուսման վարձի փոխհատուցում:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված գինը կազմում է՝ 60 063 600 (վաթսուն միլիոն վաթսուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որը ներառում է անվճար համակարգի ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցումը՝ 38 795 100 (երեսունութ միլիոն յոթ հարյուր իննսունհինգ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցումը՝ 6 040 000 (վեց միլիոն քառասուն հազար) ՀՀ դրամ, սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը՝ 3 020 000 (երեք միլիոն քսան հազար) ՀՀ դրամ, սահմանամերձ համայնքների ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը՝ 8 638 500 (ութ միլիոն վեց հարյուր երեսունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, մարտական գործողություններին մասնակցած ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը՝ 3 340 000 (երեք միլիոն երեք հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ և առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով սովորող երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցումը՝ 230 000 (երկու հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	Կատարող
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	<<Գորիսի պետական համալսարան>> ՊՈԱԿ
ք. Երևան, Կառավարական 2 շենք	ք. Գորիս, Ավանգարդ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900011034130	հ/հ 900288000012
Նախարարության գլխավոր քարտուղարի	